«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
Նախագահ _____ Ս. Սարգսյան
«01» 02 2024թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱԽՄԱՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Շախմատի մրցավարների կարգերը և կոչումները.
Հայաստանում շախմատի մրցավարներին կարող են շնորհվել հետևյալ կարգերը/կոչումը.
ա) մրցավար (Մ),
բ) առաջին կարգի մրցավար (ԱԿՄ),
գ) հանրապետական կարգի մրցավար (ՀԿՄ):
1.2 Հայաստանի շախմատի ֆեդերացիան (ՀՇՖ) կարող է նաև ներկայացնել համապատասխան պահանջները կատարած և առավել արժանի հանրապետական կարգի մրցավարների թեկնածությունը Շախմատի միջազգային ֆեդերացիա (ՖԻԴԵ)՝ ՖԻԴԵ-ի կողմից ՖԻԴԵ-ի մրցավար (ՖՄ) և միջազգային մրցավար (ՄՄ) կոչումներ շնորհելու համար:

2. Մրցավարների որակավորման պահանջները և ատեստավորումը

2.1 Մրցավարի կարգ կարող է շնորհվել ստորև նշված պահանջներին համապատասխանող անձանց.

- շախմատի որակավորման առնվազն 4-րդ կարգ,
- առնվազն մեկ մրցավարական սեմինարի մասնակցություն և ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովի կողմից թեստավորում,
- ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների լիարժեք տիրապետում,
- տարրական գիտելիքներ շախմատային էլեկտրոնային ժամացույցների կարգավորումներից,
- առնվազն վեց շախմատային մրցաշարերում կատարված մրցավարական աշխատանք (և՛ շրջանային, և՛ շվեյցարական մրցակարգերով) :

2.2 Առաջին մրցավարական կարգ կարող է շնորհվել ստորև նշված պահանջներին համապատասխանող անձանց.

- շախմատի որակավորման առնվազն 3-րդ կարգ,
- առնվազն մեկ ԱԿՄ կամ ՀԿՄ ծրագրով իրականացված մրցավարական սեմինարի մասնակցություն և ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովի կողմից թեստավորում,
- համակարգչային «Swiss-manager» վիճակահանության ծրագրի տիրապետում,
- շախմատի ՖԻԴԵ-ի կանոնների, շվեյցարական և շրջանային մրցակարգով անցկացվող մրցաշարերի կանոնների լիարժեք տիրապետում,
- հանրապետական նշանակության մրցաշարերում[1] առնվազն վեց անգամ կատարել է մրցավարական աշխատանք:

2.3 Հանրապետական կարգի մրցավարի կոչում կարող է շնորհվել ստորև նշված պահանջներին համապատասխանող անձանց.

- շախմատի որակավորման առնվազն 2-րդ կարգ,
- ՀԿՄ ծրագրով իրականացված մրցավարական սեմինարի մասնակցություն և ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովի կողմից թեստավորում,
- “FIDE Handbook”-ի («ՖԻԴԵ-ի ձեռնարկ»-ի)՝ մրցավարությանը վերաբերող բոլոր դրույթների տիրապետում,
- բոլոր տեսակի մրցակարգերով (շրջանային, շվեյցարական, թիմային, նոկաուտ, շևենինգենյան) մրցաշարերի անցկացման և վիճակահանության կանոնների լիարժեք տիրապետում,
- համակարգչային «Swiss-manager» վիճակահանության ծրագրի, տեքստեր, աղյուսակներ խմբագրող ծրագրերի և էլեկտրոնային փոստի գերազանց տիրապետում,
- տարբեր տեսակների և համակարգերի էլեկտրոնային ժամացույցների կիրառման հնարավորություններին գերազանց տիրապետում,
- վերջին չորս տարվա ընթացքում առնվազն վեց անգամ հանրապետական նշանակության մրցաշարերի[1] գլխավոր մրցավարի (ոչ պակաս քան երկու անգամ) և գլխավոր մրցավարի տեղակալի (առնվազն երեքը շվեյցարական մրցակարգով) աշխատանքների կատարում,
- միջազգային, ազգային կամ ՖԻԴԵ-ի վարպետի (ինչպես նաև կանանց միջազգային, ազգային կամ ՖԻԴԵ-ի վարպետի) կոչումների առկայության և առնվազն երեք անգամ հանրապետական նշանակության մրցաշարերի գլխավոր մրցավարի աշխատանքների կատարման (որոնցից առնվազն մեկն անցկացվել է շվեյցարական մրցակարգով) դեպքում:
  Հանրապետական մրցավարի կոչում կարելի է ստանալ առաջին կարգի մրցավար դառնալուց առնվազն երկու տարի անց:

2.4 Երեք տարին մեկ անգամ հանրապետական կարգի և առաջին կարգի մրցավարները պետք է վերապատրաստվեն ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովի կողմից: Երեք տարիների ընթացքում մրցավարական գործունեություն չիրականացրած, մեկ անգամ ատեստավորում չանցած մրցավարները հաջորդող մեկ տարվա ընթացքում չեն կարող նշանակվել հանրապետական մրցաշարերի գլխավոր մրցավար կամ գլխավոր մրցավարի տեղակալ:

3. Մրցավարական կարգերի և կոչումների շնորհման ընթացակարգ.

3.1 «Մրցավար» և «Առաջին կարգի մրցավար» կարգերն շնորհում է ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովը, իսկ «Հանրապետական կարգի մրցավարի» կոչումը շնորհում է ՀՇՖ-ի խորհուրդը: Լրացված թերթիկը (տե՛ս Հավելված 2) և մրցավարական աշխատանք կատարելու մասին վկայող ու մրցաշարի կազմակերպչի կողմից վավերացված տեղեկանքները (տե՛ս Հավելված 3) հանձնվում է ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողով: Կարգի/կոչման շնորհման հարցը քննարկվում է ՀՇՖ-ի մրցավարական հանձնաժողովի նիստում և դրական եզրակացության պարագայում հաստատվում և ներկայացվում է ՀՇՖ: Շնորհվում է մրցավարական կարգը/կոչումը հավաստող վկայական:

[1] Հանրապետական նշանակության մրցաշարեր են համարվում. ա) Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից տարեկան օրացուցային պլանով հաստատված բոլոր առաջնությունները, բ)միջազգային վարկանիշի հաշվարկման ենթակա մրցաշարեր:

Հավելված 1

ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Համաձայն “Arbitera’ manual”-ի (B.06.1 բաժին, էջ 164), մրցավարներին կարող են հաջորդաբար շնորհվել ՖԻԴԵ-ի մրցավարի (ՖՄ) և միջազգային մրցավարի (ՄՄ) կոչումներ: Միջազգային մրցավարական կոչումները շնորհվում են ցմահ՝ ՖԻԴԵ-ի կողմից սահմանված կարգի համաձայն:

ՖԻԴԵ-ի միջազգային մրցավարական կոչումների հավակնող անձանց ներկայացվող հիմնական պահանջներն են.

ա) ՖԻԴԵ-ի մրցավարի կոչմանը ներկայացվող պահանջներն են.

- մանրամասն իմանալ շախմատի օրենքների և արդար խաղի կանոնակարգերի, մրցաշարերի անցկացման ՖԻԴԵ-ի կանոնակարգի, կոչումների նորմաների ձեռքբերման և ՖԻԴԵ-ի վարկանիշային համակարգի մասին
- ողջ մրցավարական գործունեության ընթացքում ցուցաբերել բացարձակ անկողմնակալություն
- հետևյալ լեզուներից առնվազն մեկի բավարար իմացություն՝ արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պորտուգալերեն, ռուսերեն, իսպաներեն, գումարած շախմատային տերմինների իմացություն անգլերենով:
- համակարգչով աշխատելու նվազագույն հմտություններ, ՖԻԴԵ-ի կողմից հաստատված վիճակահանության ծրագրերի, տեքստեր, աղյուսակներ խմբագրելու և էլեկտրոնային փոստով աշխատելու կարողություններ,
- տարբեր տեսակի և տարբեր համակարգերի էլեկտրոնային ժամացույցներ կարգավորելու հմտություններ,
- հայտ ներկայացնելուց ՀՇՖ-ն պատասխանատու է թեկնածուի ընդհանուր համապատասխանությունը գնահատելու համար՝ հիմնվելով վերը նշված կետերի և ցանկացած այլ մատչելի փաստի վրա,
- ՖԻԴԵ-ի մրցավարի համար կազմակերպված սեմինարի մասնակցություն և մրցավարական հանձնաժողովի կողմից քննության հաջող հանձնում (պատասխանելով հարցերի առնվազն 80%-ին),
- առնվազն երեք անգամ կատարել մրցավարական աշխատանք

“Arbiters’ manual”-ի “B.06.1 բաժնի 2.3-2.8 ենթակետերի պահանջներին համապատասխան:

բ) միջազգային մրցավարի կոչմանը ներկայացվող պահանջներն են.

- մանրամասն իմանալ շախմատի օրենքների և արդար խաղի կանոնակարգերի, մրցաշարերի անցկացման ՖԻԴԵ-ի կանոնակարգի, կոչումների նորմաների ձեռքբերման և ՖԻԴԵ-ի վարկանիշային համակարգի մասին,
- ողջ մրցավարական գործունեության ընթացքում ցուցաբերել բացարձակ անկողմնակալություն,
- անգլերենի պարտադիր իմացություն առնվազն խոսակցական մակարդակով,
- համակարգչով աշխատելու նվազագույն հմտություններ, ՖԻԴԵ-ի կողմից հաստատված վիճակահանության ծրագրերի, տեքստեր, աղյուսակներ խմբագրելու և էլեկտրոնային փոստով աշխատելու կարողություններ,
- տարբեր տեսակի և տարբեր համակարգերի էլեկտրոնային ժամացույցներ կարգավորելու հմտություններ,
- հայտ ներկայացնելուց ՀՇՖ-ն պատասխանատու է թեկնածուի ընդհանուր համապատասխանությունը գնահատելու համար՝ հիմնվելով վերը նշված կետերի և ցանկացած այլ մատչելի փաստի վրա,
- 2024թ հունվարի 1-ից սկսած պարտադիր է միջազգային մրցավարի որակավորման սեմինարի մասնակցությունը և դրական պատրաստվածության գնահատումը (կազմակերպվում ՖԻԴԵ-ի կողմից),
- առնվազն չորս անգամ կատարել մրցավարական աշխատանք հետևյալ մրցաշարերում, որոնք համապատասխանում են նաև “Arbiters’ manual”-ի “B.06.1 բաժնի 2.3-2.8 ենթակետերի պահանջներին.

-տղամարդկանց և կանանց ազգային անհատական առաջնությունների եզրափակիչներ (առավելագույնը երկու նորմա),
-ՖԻԴԵ-ի պաշտոնական մրցաշարեր և մրցախաղեր,
-միջազգային կոչման նորմայով մրցաշարեր և մրցախաղեր,
- աշխարհի և մայրցամաքի արագ և կայծակնային բոլոր պաշտոնական առաջնությունները (առավելագույնը մեկ նորմա),
- “Arbiters’ manual”-ի “B.06.1 բաժնի 4.9 ենթակետի բոլոր պահանջներին համապատասխանող մրցաշարերը (առավելագույնը մեկ նորմա)

- միջազգային մրցավարի կոչում կարող է շնորհվել միայն այն դիմորդներին, ովքեր արդեն ստացել են ՖԻԴԵ-ի մրցավարի կոչում:
- միջազգային մրցավարի կոչման բոլոր նորմաները պետք է տարբերվեն ՖԻԴԵ-ի մրցավարի կոչման համար արդեն կիրառված նորմաներից և պետք է ձեռք բերված լինեն ՖԻԴԵ-ի մրցավարի կոչման շնորհումից հետո:
- Ներկայացված նորմաները ստորագրում է գլխավոր մրցավարը: Դրանք բոլորը չեն կարող լինել միևնույն գլխավոր մրցավարի կողմից ստորագրված:

Մրցավարական կոչումների (ՖՄ, ՄՄ) համար ՖԻԴԵ դիմելու ընթացակարգը նկարագրված է “Arbiters’ manual”-ի “B.06.1 բաժնի 5-րդ գլխում: